ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԶԱԼԻ ԳԱՎԱԹ 2021»

25.05.2021 17:12

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը կազմակերպում է մինի ֆուտբոլի մրցաշար՝ **«Փաստաբանների ֆուտզալի գավաթ 2021»**:

Մրցաշարը կմեկնարկի սույն թվականի **մայիսի 30-ին՝** ժամը 10:00-ին:

Խաղերը տեղի կունենան Երևանի Պետական Համալսարանի մարզադահլիճում /հասցե՝ Ալեք Մանուկյան 1/:

Մինի ֆուտբոլի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանները (արտոնագրի գործողությունը չկասեցրած) և «Փաստաբանական դպրոցի» ունկնդիրները:

Մասնակցության համար կարող եք հայտագրվել ինչպես թիմային կազմով (5 հոգի), այնպես էլ՝ անհատապես, մինչև սույն թվականի **մայիսի 28-ը** զանգահարելով 010 600 701 հեռախոսահամարին և հայտնելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները (թիմի դեպքում՝ թիմի անունը, ղեկավարի տվյալները), կամ նշված տվյալները ներկայացնելով էլեկտրոնային փոստով՝ հետադարձ հաղորդագրությամբ:

1-ից 3-րդ տեղերը կպարգևատրվեն պատվոգրերով, մեդալներով և թիմային գավաթով: Մրցաշարից հետո լավագույն խաղացողներից կձևավորվի **ՀՀ փաստաբանների պալատի ֆուտզալի հավաքական թիմը՝** այլ կառույցների թիմերի հետ մրցակցելու նպատակով:

ՀՀ փաստաբանների պալատի

մարզամշակութային ակումբի

ղեկավար՝ Վրեժ Խաչիկյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })